

«ԱՐԵՎՆԵՐ»

ՄԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

Հարգելի ընթերցող, հույս ունենք, որ «Արևներ» խորագիրն այսուհետ կօգնի մեզ՝ տեղյակ լինել հայ տաղանդավոր պատանիների ու աղջիկների ձեռքբերումներին ու հաջողություններին, որոնք գրանցվում են գրեթե ամեն օր՝ Ռոստովի մարզի հայաբնակ տարբեր քաղաքներում ու գյուղերում: Բացելով այս խորագիրը նպատակ ունենք թերթի միջոցով պարբերաբար ներկայացնել մեր շնորհալի հայորդիներին, որոնցից շատերը, վատահ ենք, հետագայում կդառնան ճանաչված անուններ: Ուստի խնդրում ենք ծնողներին ու մանկավարժներին օգնել թերթին «Արևներ» խորագիրը դարձնելու հետաքրքիր և ավելի բովանդակալից:

ԵՐԱՇՏՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՊՍԱՆԻ ԱՍՏԸ

Բոլորովին վերջերս Ռոստովի պետական երաժշտական թատրոնի կոլեկտիվը հերթական անգամ ներկայացնում էր Պուչինի «Борема» չորս գործողությամբ օպերան: Ուրախությամբ տեղեկացանք, որ ներկայացման տարբեր տեսարաններում մասնակցում են նաև մեր սաներից երկուսը՝ Դավիթն ու Սառան (նկարում): Նրանք ե-



արդեն չորս տարի հաճախում է Ռոստովի պետական երաժշտական թատրոնի մանկական երգչախումբ և համարվում է խմբի ակտիվ դերակատարներից ու մենակատարներից մեկը: Նա այս տարիների ընթացքում մասնակցել է «Кармен», «Евгений Онегин», «Борис Годунов» (Ангел), «Симфо-рок», «Летучая мышь», «Хованщина», «Борема», «Рождественский концерт» և այլ ներկայացումների: Դավիթը երգչախմբի հետ ելույթներ է ունեցել Շվեյցարիայի և Ռուսաստանի Դաշնության տարբեր քաղաքներում և շահել պատվավոր մրցանակային տեղեր: Դավիթ Արշակյանը ցանկանում է դառնալ հայտնի օպերային երգիչ: Ամանորի այս նախաշեմին Դավիթին, Սառային և բոլոր հայ մանուկներին ցանկանք հաջողություններ և երազանքների իրականացում:

Հ. Գ. Հոգվածը պատրաստ էր տպագրության, երբ ստացվեց շատ ուրախալի լուր. դեկտեմբերի 16-ին ՌԴ-ում բնակվող ժողովուրդներին նվիրված միջազգային փառատոն-մրցույթում (Цветаи нации) Դավիթն արժանացավ ժյուրիի գերազանց գնահատականին և նվաճեց Գրան պրի բարձրագույն մրցանակը: Ծնորհավորում ենք Դավիթին և ցանկանում նորանոր հաջողություններ:

Սոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



րաժշտական թատրոնի մանկական կապելլայի փոքրիկ երգիչներն են: Սառան առաջին քայլերն է անում երգչախմբում, որի ընդունակությունների հետ մեծ հույսեր է կապում երաժշտության ուսուցչուհի Ռոզա Ասլանբեկովնան:

Դավիթ Արշակյանը (14 տ., հ. լեզվի «Արևիկ» խմբակի անդամ, թիվ 83 դպրոց)

ԵՐԵՔ ՆՈՐ ՏԱՐԻ ԿԱՂԱՆՂ, ՆԱՎԱՍԱՐԴ ԵՎ ԱՄԱՆՈՐ

Հայ ժողովուրդն իր պատմության մեջ ունեցել է երեք Նոր տարի՝ Կաղանղ, Նավասարդ և Ամանոր անուններով: Դեռևս վաղնջական ժամանակներում հայերը Նոր տարին ազդարարել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը, որը նաև բնության զարթոնքի խորհրդանշան էր: Բոլոր գավառներում Կաղանղը նըշվում էր մեծ տոնախմբությամբ, տաճարներում տոնական ծեսեր էին կատարվում, որոնք ուղեկցվում էին աստվածներին գոհեր մատուցելով: Հայոց երկրորդ Նոր տարին նշվում էր Նավասարդի 1-ին, (այսինքն՝ օգոստոսի 11-ին)՝ այն օրը, երբ հայոց հիմնադիր Հայկ Նահապետը հաղթեց Տիտանյան Բելին: Աշխարհի տարբեր ժողովուրդներ տարբեր ամիսներ էին համարում Նոր տարվա սկիզբ, ուստի այս բազմազանությունը երկրների տրևտեսական և մշակութային փոխհարաբերություններում առաջացնում էր որոշ դժվարություններ: 18-րդ դարում Միսենո երևանցի կաթողիկոսն անցկացրեց տոմարագիտական ռեֆորմ, որի համաձայն հայերն Ամանորը քնկեսցին նշել հունվարի մեկին: Ժամանակը գորեղ է ժողովուրդների կենցաղը և սովորությունները փոխելու գործում: Այսպես՝ այսօր ամանորյա սեղանը զգվում է շքեղություն խորհրդանշելու համար, իսկ անհ հին Հայաստանում արգելվում էր սեղանին ամեն տեսակ մեղեդն դնել, քանի որ Նավասարդը ոչ թե ուտիք, այլ պատ օր է: Ավանդական ուսեստները պատրաստվում էին հատիկեղենից լոբուց (որի պատիճը խորհրդանշում էր բնության անբուխությունը, իսկ հատիկը՝ ընտանիքի սաղմը), ոսպից, չրերից, ընկույզներից և այլն: Սեղանի զարդը համարվում էր Տարի հացը, որի մեջ պատրաստելու ընթացքում դրվում էր գուշակության դրամը՝ դովլաթը: Հացը բաժանվում էր 12 հավասար մասերի, և ընտանիքի այն անդամին, ում բաժին էր ընկնում դովլաթը, Նոր տարում հաջողություններ էին սպասվում: Մեր նախնիները նույնպես ունեցել են ձմեռային հրաշագործ, ում անվանում էին Մեծ պապուկ կամ Կաղանղ պապա:

Նա առնչվում էր կաթողիկոս Մահակ Պարթևի անվան հետ, ով, համաձայն ավանդության, հայտնվում էր գավազանով և ոչխարի մորթուց պատրաստված քուրքով: Մերօրյա տոնածառը կապում են գերմանական Ռեֆորմացիայի առաջնորդ Մարտին Լյութերի անվան հետ: Մի գիշեր հոգևած տուն գնալիս Լյութերը նստում է ձամփեցրին՝ մի փոքր հանգստանալու: Ճանապարհը զարդարված է լինում եղևնիներով, որոնց ճյուղերի արանքից



առկայծում են փայլուն աստղերը: Տպավորված նրանց գեղեցկությանը՝ Մարտին Լյութերը իր տանը զարդարում է առաջին եղևնին: Հայ իրականության մեջ տոնածառ, որպես այդպիսին, չի եղել, սակայն դեռևս հնուց հայերն ունեցել են ծառերի պաշտամունք և տոնածառին փոխարինել են ձիթենու ճյուղերը: Նրանցից ամենահասարկ Նոր տարվա գիշերը խրել են մեծ հացի մեջ և զարդարել ընկույզեղենով, ցորենի հասկերով, լոբիով, զանազան մրգերով, հատկապես կանաչներով, որոնք պարզաբերություն էին խորհրդանշում, նաև չարիսափաններով ու մարդակերպ կամ կենդանիներով թխվածքներով: Տանտերը Կաղանղի ծառը տարել է եկեղեցի և քահանայի օրհնությունը ստանալուց հետո վերադարձրել տուն: Տարվա գաղափարը առաջին անգամ ծագել է Եգիպտոսում՝ կապվելով Նեղոս գետի վարարման հետ: Վերջինս համրկնում էր Միքիլոս աստղի երևալուն: Եվ անհայտ աստղի ու Նեղոսի վարարման միջև ընկած ժամանակաշրջանն էլ կոչեցին տարի:

ԴՈՒՆԻ ՆԱԽԻՉԵՎԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ 30-ԱՄՅԱԿԻՆ

ՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՂՈՒԹՆԵՐԸ

(շարունակություն)

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՂՈՒԹՆԵՐԸ

Մոսկվան հայերին ծանոթ էր տակավին 14-րդ դարից: Մակայն ռուսական մայրաքաղաքում հայկական համայնքը ձևավորվում է 17-րդ դարի երկրորդ կեսին: Դրան մեծապես նպաստեց 1667 Նոր Ջուղայի առևտրական ընկերության Մոսկվայի հետ կնքած պայմանագիրը: Դրանով հնարավորություն էր ստեղծվում Վոլգայով մինչև Արխանգելսկ և այլա արտասահմանյան երկրների հետ առևտուր անել: Մոսկվան դառնում է հայ վաճառականների, արհեստավորների, դիվանագիտական ծառայողների, արվեստագետների հանգրվան:

Այդ տարիներին Մոսկվայում հաստատվում է նկարիչ Բոգդան Մալթանովը: Նա կարևոր դեր է կատարում ռուսական գեղանկարչության մեջ: Ջուղայի վաճառական Խոջա Ջաբարը Ալեքսեյ ցարին է նվիրում նշանավոր «Այվաստե գահը», որն այժմ գարդարում է Կրեմլի Ձինապալատը: Հետագա դարերում շարունակվում է հայերի հոսքը Մոսկվա: Բազմաթիվ հայ ընտանիքների շարքում Մոսկվա է տեղափոխվում նաև Լազարյանների գերդաստանը: Նրանք Մոսկվայում, ապա Պետերբուրգում առևտրաարդյունաբերական լայն գործունեություն են ծավալում: Լազարյաններն իրենց բարձր դիրքն օգտագործեցին և ավելի քան մեկ դար մեծապես նպաստեցին ռուսահայերի տնտեսական և մշակութային գործունեությանը: Պետերբուրգի հիմնադրումից (1703թ.) մի քանի տարի անց հայերը հաստատվեցին



այնտեղ: Ռուսաստանի նոր մայրաքաղաք էին գալիս հայ վաճառականները: Այստեղ են հաստատվում նաև Բախանով եղբայրները: Նրանք Պարսկաստանի հետ առևտուր անելու համար հիմնում են հատուկ ընկերություն: Մետաքսագործական ֆաբրիկաներ են հիմնվում հայերի (Մանուիլով, Շիրվանով, Ախվերդով) կողմից: Համայնքն այնքան է սովորանում, որ 18-րդ դարի վերջերին կառուցում է հայկական երկու եկեղեցի: 1781թ. Գր. Խալաթյանն այնտեղ հաստատեց Լուսինից տեղափոխած իր տպարանը: Հետագայում տպարանը տեղափոխվեց Նոր Նախիջևան, ապա Աստրախան և ունեցավ բեղուն գործունեություն: Այս համայնքների ինքնավարությունը իրականացնում էր եկեղեցական խորհուրդը:

ՀՅՈՒՄԻՍՏԱՅԻՆ ԿՈՎՎԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՂՈՒԹՆԵՐԸ

Օգտվելով հայերին շնորհիվ արտոնություններից 1735թ. նրանցից մի խումբ հաստատվում է նորակառույց Դրզլար ամրոցում: Հայկական մեկ այլ գանգված 1763թ. բնակություն է հաստատում նոր հիմնադրված Մոզդոկ բերդ-ամրոցում: 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին կեսին ձևավորվեցին Եկատերինոգրաի (Կրասնոդարի), Մայկոպի, Ստավրոպոլի և այլ քաղաքների հայկական համայնքները: 1839թ. չեթեբեգահայերը հիմնեցին Արմավիրի հայկական գաղութը: Այդ հայկական համայնքները, մանավանդ Դրզլարը և Մոզդոկը, ստացան մեծ արտոնություններ: Նրանց թույլատրվում էր ազգային սովորույթներով դատավարություն վարել, ազատ առևտուր անել: Դրզլարը և Մոզդոկն ունեին իրենց ոռոգող համալիր, որը զբաղվում էր համայնքի դատական և վարչատնտեսական գործերով: Այն հայերի ինքնավարությունը փաստող մարմին էր: Նորաբնակները սկսեցին մշակել բերինձ, բամբակ, քունջութ, խաղող և այլ կուլտուրաներ: Նրանք լայն չափերով զբաղվում էին հատկապես խաղողագործությամբ: Դրզլարի և Մոզդոկի հայերը թթեռու մեծատարած այգիներ էին պահում մետաքս ստանալու համար: Արդյունաբերական ճյուղերից զարգացած էր հատկապես գինու և ջուր արտադրությունը, որը շատ մեծ ծավալ էր ընդունել: 1823թ. հայերին պատկանող ձեռնարկություններում արտադրվել է 96 հազար դոլլ օղի:

Հյուսիսային Կովկասի հայերը ակտիվ մասնակցում էին երկրամասի ներքին և արտաքին առևտրին:

Այդ գաղթականները աշխարհագրական հարմար դիրքի շնորհիվ սերտորեն կապված էին մայր հայրենիքի հետ: Մըշտական շփումները նպաստում էին հայ համայնքներում ազգային լեզվի ու սովորությունների պահպանմանը: Երկրամասի հայ համայնքներում մշակույթը արտահայտվում էր գերազանցապես դպրոցական-կրթական և թատերաերաժշտական ասպարեզում: 1912թ. Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերում դպրոցների թիվը հասնում է 34-ի: Նրանցում սովորում էր 2300 երեխա: Այդ գաղթօջախները ունեին իրենց թատերական, երաժշտական խմբերը

ԳՐԻՈՐԻՈՂՈՒ

Հայկական այս գաղութի հիմնադրումը կապվում է ռուս-թուրքական պատերազմի (1787-1791 թթ.) հետ: Պատերազմի ավարտից հետո Մոլդովայից և Բեսարաբիայից գաղթած 4000 հայերի տարածք հատկացվեց Դնեստր գետի ավազանում: Նրանք հիմնեցին Գրիգորիոպոլ քաղաքը և երկու հայկական գյուղ:

1794թ. Եկատերինա II թագուհու հրամանագրով արտոնություններ շնորհվեցին նորաբնակներին: Հայ համայնքն ստացավ ինքնավարություն, որն իրականացնում էր մագիստրատը: Գրիգորիոպոլը շուտով հայտնի դարձավ որպես առևտրական կենտրոն: Խոշոր վաճառականները ստեղծեցին 95 հոգուց բաղկացած ընկերություն: Այն զբաղվում էր գերազանցապես արևելյան առևտրով:

(սկիզբը՝ նախորդ համարում)

